# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

## ՊԷՏՔ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ

—

«Հորիզոնի» նախավերջին առաջնորդողը խօսելով մեր ուսուցիչների մտաւոր ու բարոյական վիճակի վրայ՝ երկու կողմից էլ գտնում է շատ անմխիթարական։ Եւ յիշատակելով, որ նրանց մտաւոր պատրաստութիւնը բարձրացնելու համար անցեալ տարուայ ծրագրական խորհրդակցութիւնների ժամանակ որոշում է եղել թեմական դպրոցներին կից մանկավարժական լրացուցիչ դասարաններ բաց անել— կանգնում է երկրորդ ցաւի առաջ, թէ ի՞նչ պէտք է անել հայ ուսուցչին բարոյական ախտաւոր վիճակից հանելու։

Նոյս կենսական հարցին է նուիրուած և պ. Ց. Խ. «Մեդալի միւս կողմը» յօդուածը «Բագւի Ձայնի» նախավերջին №-ի մէջ

Պ. Ց. Խ. էլ նկատելով, որ մեր հոգաբարձուներն անբաւարար են առհասարակ, շեշտը դնում է հիմնական կէտի—հայ ուսուցչի վրայ, որ դպրոցին հոգի ներշնչողն է, և, նոյնպէս գործը քննելով բարոյական ու մտաւոր կրկին տեսակէտներից, հաստատում է, որ հայ դպրոցը իր բարձրութեան վըրայ չի։

Սակայն, ինչպէս ճիշտ նկատում է պ. Ց. Խ., մեր դպրոցական գործի աննախանձելի դրութիւնը դեռ 60 ական թւականներից սկսած հասարակութեան և մամուլի մտահոգութեան ամենակարևոր առարկաներից մէկն է եղել։

Պատճառն ի՞նչ է, որ մինչև էսօր հայ դպրոցը, կամ հայ ուսուցիչը ոչ թէ իր բարձրութեան վրայ չի, այլ հրապարակ է հանում բարոյական թէ մտաւոր անկման էն տեսակ երևոյթներ, որ առաջ են բերում յօդւածագիրները, և որոնցից աւելի սոսկալիները կարող է պատմել հէնց տողերիս գրողը։

Պատճառը պէտք է փնտրել մի կողմից օտարական պայմանների մէջ, միւս կողմից մեր ժողովրդի պատմական իւրայատուկ վիճակի մէջ, ասում է պ. Ց. Խ.։

«Հորիզոնը» աւելի ընդհանուր բառ է գործածում։ Ասում է այն նաննացեալ դրութիւնն է պատճառը, որի մէջ գտնւում է հայ ուսուցչութիւնը։

Այո, պատճառները կարող են մի քանիսը լինել և մինը էս պատճառի վրայ կը ծանրանայ, միւսը էն, բայց ինչքան ծանօթ եմ հայ ուսուցչին ու նրա կեանքին, ես կարծում եմ ամենագլխաւոր պատճառ էն է, որ հայ ուսուցիչը խեղդւած է նիւթական նեղ վիճակի մէջ, չի կարողանում ապրել, չի կարողանում հաստատ ու սրտալի կանգնել իր տեղը, իր կոչումի բարձրութեան վրայ և հետզհետէ չի կարողանում զարգանալ ու զօրանալ թէ մտաւորապէս և թէ բարոյապէս։ Էս կամ էն անկիւնը ընկնելով, ընկնելով նեղ ու դժնդակ պայմանների մէջ, սպառում է իր համեստ ուժերը և հետզհետէ իջնելով ներկայացնում մի խանգարւած ու ետ մնացած մարդ, և կամ, եթէ կեանքի մէջ մի դուռն ու ճանապարհ է գտնում, թողնում է փախչում հայոց դպրոցից իր տեղը տալով աւելի ու աւելի տկարներին, և յաճախ նոյնիսկ էն տեսակ մարդկանց, որոնցից ժանդարմները ստորագրութիւն են առնում, թէ էլ դանոս չգրէք։ Եւ փաստ է սա։

Այո, փախչում է հայ ուսուցիչը հայոց դպրոցից, և ոչ միայն ինքն է փախչում, այլ փախցնում է և իր զաւակներին՝ տալով օտար դպրոցներ, որ նրանք զերծ լինեն ազգային մշակոյթի անդաստանում աշխատողների չարքաշ կեանքից, ինչպէս յիշւած է «Հորիզոնի յիշեալ յօդւածում։

Եւ եթէ մենք ուզում ենք ետ բերել նրան, լաւացնել, զօրացնել, բարձրացնել ու ամուր կանգնեցնել իր տեղը, իր պաշտօնի մէջ, պէտք է նրա համար ստեղծենք մարդավայել պայմաններ։

Դրա համար ամենից առաջ պէտք է բարձրացնել նրա դասագինը, նրա ռոճիկը։ Եւ նրա ռոճիկը բարձրացնելու աւելի յարմար օր չի կարող լինել, քան էսօրւայ օրն է, Հայոց գրի ու գրքի մեծ յոբելեանի օրը։ Էսօր դրւած է հայոց դպրոցական ֆոնդի խնդիրը, հայոց դպրոցի ապահովութեան խնդիրը։ Եւ եթէ դըպրոցը ուսուցիչն է, ապա ուրեմն իսկապէս դրւած է հայ ուսուցչի ապահովութեան խնդիրը։ Թող էդ խնդիրը, հարկաւ խորհրդակցութիւններից ու քննութիւններից յետոյ, էսօր առնի իրեն իրական որոշումը—մեծ տօնի օրը բարձրացնել հայ ուսուցչի դասագինը ամեն տեղ, թէ ծխական դպրոցներում թէ միջնակարգ։

Եւ ցանկալի է, որ էս խնդիրը ընդհանուր մամուլի էջերում։

Յովհ. Թումանեան

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

### Պ. Յովհաննէս Թումանեանին

—

Յարգելի պ. Յովհաննէս։

Դուք ինձ առաջարկում էք մի այնպիսի հարց, որին պատասխանելու համար հարկաւոր է թերթել երկու տարուայ պատմութիւնը, որ անցաւ Համազգային մեծ տօնակատարութեան շուրջը։

Սակայն ես այդ չեմ անիլ. դա շատ կերկարի, նամանաւանդ որ այդ բանը ձեզ աւելի յայտնի է։ Ես միայն առաջ կը բերեմ, որքան յիշում եմ, այդ հարցի շուրջը կատարւած մոմենտներ։

Յայտնի է, որ այդ տօնակատարութեան պատճառով Թիֆլիսում կազմւեց երկու հոսանք, որոնք տարաբաղդաբար Համազգային եզակի տօնը մէկ կողմ թողած՝ տօնի առթիւ ունեցած իրենց տեսակէտներն էին պաշտպանում։

Այդ իսկ րոպէից առաջ եկաւ ոչ ցանկալի պառակտումը։

Մեսրոպ եպիսկոպոսի ջանքերը իզուր եղան նրանց միացնելու. բայց եթէ նորին սրբազնութիւնը բոլսայի դաշլիճում հաւաքւած ժողովականներին յարգելու համար ընտրել տւեց այդտեղ ընտրւած յանձնաժողովի սկզբնապատճառ եղող պ. Հ. Առաքելեանին, այն ժամանակ կը հարթւէր հարցը և տօնակատարութեան գործը կըստանար իր խաղաղ ընթացքը *)։

Այնուհետև վրայ հասաւ վեհափառ Հայրապետի առաջադրութիւնը, որ հրաւիրում էր երկու յանձնաժողովներին գործելու առանձին-առանձին, միմիայն դպրոցական ֆոնդը աչքի առաջ ունենալով։

Սակայն քաղաքային տան մէջ ընտրւած յանձնաժողովը դրանից յետոյ բոլորովին հրաժարւեց գործելուց։

Այժմ ձեզ եմ հարցնում՝ ինչու հրաժարւեց. ոչ ապաքէն նրա համար, որ մէջ տեղում գրական ֆոնդը չկար։ Անա դրանից յետոյ առաջացաւ և երկրորդ պառակտումը։

Ձեզ միշտ յարգող

Ա. Քիշմիշեան

27 սեպտ. 1913 թ.

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

### (Տաճկահայ թերթերից)

Կիմանանք որ Պերպէրեան վարժարանի նախաձեռնութեամբ և Սկիւտարի բոլոր ընկերութեանց մասնակցութեամբ՝ պատրաստութիւններ կը տեսնուին հոկտեմբեր 13-ին այդ թաղին մէջ ալ շքեղօրէն տօնելու Մեծ Յոբելեանը։

—

Թրէար, 17 սեպտ. Գրի և տպա-

*) Այսպէս ուրեմն պ. Ա. Քիշմիշեանն էլ խոստովանում է այն, ինչ որ մենք շարունակ պնդել ենք, այսինքն, որ յոբելեանական յանձնաժողովների պառակտման պատճառը պ. Հ. Առաքելեանն է։ Այս ուշագրաւ խոստովանութիւնը ցոյց է տալիս, թէ ինչ արժէք ունին այն սկզբունքային յայտարարութիւնները, որոնցով պ. պ. Քալանթարը Սպէնդիարեանը, Աֆրիկեանը և այլն պատճառաբանում էին իրենց հրաժարականը թեմ. Յոբել. Յանձնաժողովից

Խմբ.